ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/47, 11.04.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ

Պատվիրատու՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար ուսուցողական պաստառների ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չեղյալ համարել 08.04.2019թ. ընդունած որոշումները (հիմք հանձնաժողովի նիստի արձանագրություն թիվ 5) և հաղթող ճանաչել «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ին

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Մ. ԱՆԱՆՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԾԱՏՈՒՐՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

հասցե՝ ք. Երևան, Մելիք Ադամյան 1

Բողոք բերող անձ՝ <Իմպորտ Թրեյդ> ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ. Արագածոտնի մարզ, գ. Ավան, փող 5, փկղ. 1
էլ. հասցե importart.info@gmail.com, Հեռ. 043 14 18 18

Պատվիրատուի անվանումը՝ <<<ՀԱԷԿ>> ՓԲԸ
հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ <<<ՀԱԷԿ>> ՓԲԸ կարիքների համար ուսումնական պաստառների ձեռքբերում, ծածկագիր <ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/19>

ԲՈՂՈՔ

1. Բողոքի առարկան և բողոք ներկայացրած անձի պահանջը

Սույն թվականի մարտի 18-ին հրապարակվել է <<<ՀԱԷԿ>> ՓԲԸ կարիքների համար (այսուհետև՝ Պատվիրատու)՝ ուսումնական պաստառների ձեռքբերման նպատակով կազմակերպված <ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/19> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

1.Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները

<Իմպորտ Թրեյդ> ՍՊ ընկերությունը 24.03.2019թ. հիշյալ ընթացակարգի մասնակցության համար հայտ է ներկայացրել և հանձնաժողովի 28.03.2019թ. որոշմամբ ճանաչվել է 1-ին տեղը զբաղեցրած մասնակից /արձանագրություն 3 կցվում է/: Նույն օրը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մեր ընկերությանը առաջարկվել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

29.03.2019թ. ընթացակարգի քարտուղարի Nana.Hakobyan@anpp.am էլ. փոստին մեր կողմից ուղարկվել են հրավերով պահանջվող որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը /կցվում են/:

04.04.2019թ. (ժամը՝ 17:57) ընթացակարգի քարտուղարի կողմից մեր ընկերության էլ փոստին նամակ է ուղարկվել, առ այն, որ <<< ԿԱ ՊԵԿ-ի կողմից ներկայացված եզրակացությամբ Ձեր ընկերության- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը զրո է>: Ուստի առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման 47-րդ կետի պահանջներով մեզ առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել տվյալ անհամապատասխանությունը:

05.04.2019թ. շտապ կերպով ընկերության տնօրենը այցելել է մեր ընկերությանը սպասարկող ՀՀ ՊԵԿ ՀՎՍ թիվ 7 բաժին /ք. Աշտարակ/ և խնդրել պարզաբանել <երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը զրո> պատասխանելու պատճառը, իսկ անհամապատասխանությունը շտկելու նպատակով դիմել է, որպեսզի ստանա գրավոր տեղեկատվություն մեր ընկերության երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարի վերաբերյալ: ՀՀ ՊԵԿ ՀՎՍ թիվ 7 բաժնի կողմից, որպես գրավոր տեղեկատվություն մեզ է տրամադրվել 2018թ մայիսից դեկտեմբեր ամիսների ԱԱՀ ամսեկան (ընկերությունը գրանցված է 2018թ մայիսին) և 2018թ. տարեկան հաշվարկները՝ հաստատված իրենց կնիքով: Տրամադրված գրավոր հաշվարկներից հստակ երևում է, որ ընկերությունը՝ հրավերով պահանջվող, հաշվետու ժամանակաշրջանում ունեցած համախառն եկամտի հանրագումարը զրո չէ, այլ կազմում է՝ 22 755 663 ՀՀ դրամ, ինչը համապատասխանում է հրավերով ներկայացված պահանջին:

Նույն օրը ընկերության տնօրենը ՀՀ ՊԵԿ ՀՎՍ թիվ 7 բաժնի կողմից կնքված հաշվարկները սահմանված կարգով ուղարկվել է հանձնաժողովի քարտուղարի էլ. հասցեին /կցվում են/:

09.04.2019թ մեր ընկերության էլ հասցեին ստացվել է ոչ ավտոմատ ծանուցում, որին կցված էր ընթացակարգի հանձնաժողովի թիվ 5 արձանագրությունը: Արձանագրության մեջ գրված էր, որ <Իմպորտ Թրեյդ> ՍՊ ընկերության կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չի շտկվել, ինչի արդյունքում ընկերության հայտը մերժվել է, իսկ ներկայացված ՊԵԿ հաշվարկները հանձնաժողովը ուսումնասիրելու և գնահատելու իրավասություն չունի /արձանագրություն 5 կցվում է/:

Այսպիսով, հանձնաժողովի կողմից ներկայացված անհամապատասխանությունը ամբողջովին շտկվել է մեր ընկերության կողմից /սահմանված կարգով և ժամկետում/, նաև հանձնաժողովը մեր կողմից ներկայացված հաշվարկներով լիովին հնարավորություն է ունեցել բավարար գնահատելու հրավերով պահանջվող «ֆինանսական միջոցներ» որակավորման չափորոշիչը, սակայն մեզ համար անհայտ պատճառով չի արել այն, փոխարենը մերժել է ընկերության հայտը:

Պնդում ենք, որ հանձնաժողովը իրավական նորմերին տալով կամայական մեկնաբանություն ստեղծել է անհավասար և խտրական մրցակցային պայմաններ, որի արդյունքում մեր ընկերությունը անիմաստ կերպով զրկվել է ընթացակարգին հետագա մասնակցությունից, նաև ընթացակարգում մեզ չվերականգնելու դեպքում պետությանը կպատճառվի՝ 1 752 500 ՀՀ դրամի վնաս:

Մ-160 46-2019
11.04.2019թ.

Ուստի, առաջնորդվելով <Գնումների մասին> ՀՀ օրենքի 46-րդ և 50-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետով ներկայացնում ենք բողոք :

Մանավորապես՝

<u>Պահանջ:</u> Հաշվի առնելով վերը շարադրվածը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդվածի 50-ի, 7-րդ մասի, 1-ին կետի, բ/ ենթակետով խնդրում ենք պարտավորեցնել <ՀԱԷԿ-ԳԱՄՊՁ-26/19> ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չեղյալ համարել իր 08.04.2019թ-ին ընդունած որոշումները /հիմք հանձնաժողովի նիստի արձանագրություն թիվ 5/ և հաղթող ճանաչել <Իմպորտ Ցոնգ> ՍՊԸ-ին:

1. Բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը. Վճարման հանձնարարագրի անդորրագիր թիվ 002199

2. Բողոք բերող անձի տնօրենի ՆՔ-ի, ընթացակարգի հանձնաժողովի նիստերի արձանագրությունների, ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերի, էլ փոստով արտատպված գրությունների պատճենը:

Առդիր թերթ:

<Իմպորտ Թրեյդ> ՍՊԸ

տնօրեն Ա. Առաքելյան

ИМПОРТ ТРЕЙД
IMPORT TRADE
05023335

10.04.2019թ.